ԱՄԲԵՐԴ

ՀՊՏՀ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՀՀ արժեթղթերի և միջբանկային վարկային շուկաներ

## Ամսական տեսություն
## (Նոյեմբեր 2018)

ԵՐԵՎԱՆ 2018

Հարգելի այցելու,

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ներկայացված Ֆինանսական շուկաների վիճակի և զարգացումների ամսական տեսությունը հրապարակվում է ամսական հաճախականությամբ և իրենից ներկայացնում է ՀՀ ֆինանսական շուկաներում իրականացված գործարքների ամփոփ վերլուծություն: Այն իր մեջ պարունակում համաշխարհային ապրանքային և ֆինանսական շուկաներում տեղի ունեցած գործընթացների ու միտումների ամփոփ տեղեկատվություն. ՀՀ մակրոտնտեսական հիմնական ամսական ցուցանիշների դիտարկում. ՀՀ ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության ընթացքում իրակնացված գործառնությունների վերաբերյալ, ինչպես նաև պետական, կորպորատիվ արժեթղթերի շուկաների և միջբանկային շուկաներում կնքված գործարքների վերաբերյալ ամփոփ վերլուծություն:

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից համաշխարհային ֆինանսական շուկաների զարգացումների վերլուծության նպատակը այս շուկաներում տեղի ունեցող գործընթացները տեսանելի դաշտում պահելն ու դրանց ազդեցությունը ՀՀ եվրոպարտատոմսերի, ՀՀ ներքին ֆինանսական շուկայի և ընդհանրապես՝ երկրի մակրոտնտեսական վիճակի վրա հասկանալն է, ինչը, նկատի ունենալով ազդեցությունների լագային(ժամանակային առումով խզված) բնույթը, կարևոր է մեր տնտեսության համար ապագա զարգացումների կանխատեսման տեսանկյունից: Մյուս կողմից՝ համաշխարհային կապիտալի շուկաներում ներդրողներ են նաև ՀՀ սուբյեկտները(ԿԲ, կենսաթոշակային ֆոնդեր, այլ ինստիտուտներ և անհատներ), ինչը ևս կարևոր է դարձնում այստեղ ընթացող զարգացումների վերլուծությունը: Այս՝ ամսական պարբերականությամբ հրապարակվող տեսությունը ամփոփում է ՀՀ եվրոպարտատոմսերի, համաշխարհային ապրանքային(մետաղներ, էներգակիրներ, պարենային ապրանքներ), արժութային(դոլարի ինդեքս, եվրո, ՌԴ ռուբլի) և կապիտալի(զարգացող և զարգացած երկրների ֆոնդային ինդեքսներ և պետական պարտատոմսերի եկամտաբերություններ) շուկաներում տեղի ունեցող զարգացումների վերլուծությունը: Ամսական տեսությունը հիմնվում է Investing.com հարթակի հրապարակած վիճակագրության վրա, իսկ վերլուծությունների հիմքում Reuters գործակալության տեղեկատվական ու վերլուծական հրապարակումներն են և սեփական դիտարկումները: ՀՀ սոցյալ տնտեսական վիճակի հետ կապված հիմնական ցուցանիշների ներկայացումը նպատակ ունի ներկայացնել ՀՀ տնտեսական ակտիվության, տնտեսության հիմնական ճյուղերի զարգացումների, սպառողական և արդյունաբերական գների ինդեքսների, արտաքին ապրանքաշրջանառության և բնակչության միջին ամսական աշխատավարձերի ընդհանուր միտումները, ինչը թույլ է տալիս գնահատել Ֆինանսական շուկաների վրա մակրոտնտեսական և սոցյալ-տնտեսական ընդհանուր վիճակի ազդեցությունները: ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության շրջանակներում ներկայացված են ԿԲ կողմից կիրառվող անուղղակի գործիքների կիրառումը, դրանց շրջանակներում իրականացված գործարքները, ինպես նաև դրամական զանգվածի կառուցվածքը և դրանում իրականացվող փոփոխությունները: ՀՀ արտարժույթի շուկայի հետ կապված ներկայացված են ԱՄՆ դոլարի, Եվրոյի, ՌԴ ռուբլու բորսայական, արտաբորսայական, ներբանկային և միջբանկային գործարքները, ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի շուկայում իարկանացված գործառնությունները: Արժեթղթերի շուկայի

 © ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագիր

վերլուծությունը բաղկացած է պետական և կորպորատիվ արժեթղթերի շուկաների հետ կապված դիտարկումներից: Պետական պարտատոմսերի շուկայի հետ կապված ներկայացվում են առաջնային շուկայում դրանց տեղաբաշխումները, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող հետգնումները, բորսայական և արտաբորսայական շուկաներում կնքվող գործարքները, գործակալ բանկերի կողմից բորսայական գնանշումները, ինչպես նաև պետական պարտատոմսերի եկամտաբերության կորերի փոփոխությունները: Կորպորատիվ արժեթղթերի շուկայի հետ կապված ներկայացվում են բորսայական և արտաբորսայական տեղաբաշխումները, բորսայական շուկայում կնքված գործարքները, դրանց շուկա ստեղծողների գնանշումները: Միջբանկային շուկայի վերլուծությունն իրենից ներկայացնում են միջբանկային վարկային, սվոփ և ռեպո շուկաների ամփոփ դիտարկումներ:

Ամբերդ հետազոտական կենտրոնի կողմից ֆինանսական շուկաների վիճակի և զարգացումների վերաբերյալ հրապարակվող ամփոփագրի տեղեկատվական հիմքերն են ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ Կենտրոնական Բանկի, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ԲԲԸ հրապարակումները և վիճակագրական աղբյուրների բազաները: Ձեզ ներկայացվող վիճակագրական աղյուսակների, գծապատկերների և ներկայացվող տվյալների մի մասը նշված մարմինների կողմից օրական կտրվածքով հրապարակվող տվյալների համախմբման արդյունք են:

Սույն վիճակագրական նյութերը, վերլուծությունները և դիտարկումները ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոնի մտավոր սեփականությունն են և դրանցից օգտվելու դեպքում հղումը կենտրոնի կայքին պարտադիր է:

«Ամբերդ» հետազոտական կենտրոն
Երևան, Նալբանդյան 128, թիվ 3 մասնաշենք   Հեռ.՝ (+37410) 593-479 Էլ. հասցե՝ info@amberd.am

## Բովանդակություն

Ամփոփ տեսություն ........ 5

1.Պետական պարտատոմսերի շուկա ........ 8

2. Կորպորատիվ արժեթղթերի շուկաներ........ 19

3.Ռեպո գործարքներ ........ 36

4.Սվոփ գործարքներ ........ 37

5, Միջբանկային վարկային շուկա........ 37


© ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագիր

# Ամփոփ տեսություն

Ամփոփելով 2018թ. նոյեմբեր ամսին ՀՀ արժեթղթերի և միջբանկային վարկային շուկաներում կնքված գործարքները կարող են նշել, որ.

1. Պետական պարտատոմսերի շուկայում նոյեմբեր ամսին Ֆինանսների նախարարության կողմից իրականացվել է 11,517 մլրդ դրամի 8 տեղաբաշխում: Ընդհանուր առմամբ պարտատոմսերի պահանջարկը մոտ 1,36 անգամ գերազանցել է պահանջարկին: Իրականացված կարճաժամկետ պարտատոմսերի բոլոր աճուրդների դեպքում նախորդ ժամանակահատվածներում իրականացված տեղաբաշխումների նկատմամբ հիմնականում տոկոսադրույքի նվազում են ունեցել: 2027թ. մարվող միջնաժամկետ 60 ամսական պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի պահանջարկը առաջարկին գերազանցել է 1,13 անգամ, իսկ աճուրդի սահմանային և միջին եկամտաբերությունները եղել են համապատասխանաբար 8,4733% և 8,3108%:

2. Ընդհանուր առմամբ շրջանառության մեջ եղած պետական պարտատոմսերի ծավալները նախորդ ամսվա վերջի դրությամբ նոյեմբեր ամսին ավելացել են՝ միջնաժամկետի և երկարաժամկետի ծավալները կազմել են 548,599 մլրդ դրամ (աճել է 8,056 մլրդով), իսկ կարճաժամկետինը նվազել է՝ կազմելով 26,721 մլրդ (աճել է 0,530 մլրդ-ով): Շրջանառության մեջ եղած կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը հոկտեմբեր ամսվա վերջին կազմել է 6,1771 % (հոկտեմբերի վերջին՝ 6,1595%): Միջնաժամկետ և երկարաժամկետ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը շրջանառության մեջ կազմել է 12.6583 %՝ նախորդ ամսվա վերջի 12.7231%-ի փոխարեն:

3. Նոյեմբեր ամսին պետական պարտատոմսերի երկրորդային շուկայի արտաբորսայական հատվածում իրականացվել է 7,054 մլրդ դրամի 49 գործարք: Միջբանկային գործարքների ծավալները կազմել են կնքված գործարքների 1,4 տոկոսը՝ 0,99 մլրդ դրամ, ինչը 1 գործարքի արդյունք է: Ֆինանսական շուկայի այլ մասնակիցների միջև կնքված գործարքների ծավալը կազմել է 6,955 մլրդ դրամ: Կնքված գործարքների 22,7 տոկոսը կնքվել է 47 թվականին մարվող պետական 30 տարեկան պարտատոմսերով, 18,2 տոկոսը՝ 36 թվականին մարվող 20 տարեկան երկարաժամկետ, 17,8 տոկոսը՝ 20 տարեկան 32 թվականին մարվող պետական պարտատոմսերով, իսկ 25,8 տոկոսը՝ 2023 թվականին մարվող միջնաժամկետ պետական պարտատոմսերով:

4. Նոյեմբեր ամսվա ընթացքում բորսայական շուկայում ընդհանուր առմամբ կնքվել է պետական պարտատոմսերով 0,706 մլրդ դրամի 26 գործարք: Գործարքները նեյեմբեր ամսվա ընթացքում նվազել են մոտ 2,6 անգամ: Գործարքների 34,4 տոկոսը կնքվել է 36 թվականին մարվող 20 տարեկան երկարաժամկետ պարտատոմսերով, 25,0 տոկոսը կնքվել են 47 թվականին մարվող 30 տարեկան երկարաժամկետ պարտատոմսերով: 18,5 տոկոսը կնքվել է 20 թվականին մարվող 60 ամսան միջնաժամկետ պարտատոմսերով: Նախորդ ամսվա համեմատ գրեթե բոլոր պարտատոմսերի եկամտաբերությունները նվազել են բացառությամբ 36 և 47 թվականին մարվող պարտատոմսերի:

5. Դրամային գնանշմամբ կորպորատիվ պարտատոմսերի բորսայական հարթակում կնքվել է մոտ 101,2 մլն դրամի գործարք: Ընդ որում դրամային պարտատոմսերով կնքված գործարքների ամբողջ ծավալի մոտ 60,6 % -ը կազմել են «Ֆինքա» ՓԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմերով գործարքները: Դոլարային պարտատոմսերի շուկայի ծավալը կազմել է մոտ 4,3 մլն դոլար: Դոլարային գործարքների դեպքում "Ամերիաբանկ" ՓԲԸ–ի AMRBB4 բորսայական հապավմամբ արժեկտրոնային պարտատոմերով գործարքները կազմել են բոլոր գործարքների 51,7 %-ը: Եվրոյով գործարքներ կնքվել են 104,149 հազար եվրո ծավալով, որոնց 52 % -ը Արմսվիսբանկ ՓԲԸ պարտատոմսերով:

6. Նոյեմբեր ամսին բաժնետոմսերի հարթակում կնքվել է ընդամենը 1 գործարք «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ բաժնետոմսերով: Գործարքի ծավալը 32 480 դրամ է կազմել, իսկ գործարքի առարկա են հանդիսացել 29 բաժնետոմս: Բաժնետոմսերի հասցեական հարթակում գործարքներ են կնքվել «Հայէկենոմբանկ» ԲԲԸ անվանական բաժնետոմսերով: Գործարքների ընդահնուր ծավալը կազմել է 408,800 դրամ:

7. Արտաբորսայական ռեպո շուկայում պետական պարտատոմսերով կնքված ռեպո գործարքների ծավալը նոյեմբեր ամսին կազմել է 306,161 մլրդ դրամ: Գործարքների մոտ 38,3 %-ը կազմել են միջբանկային ռեպո գործարքները, որոնք կնքված գործարքների քանակի առումով կազմել են բոլոր գործարքների 10%-ը: Միջբանկային ռեպո գործարքների ծավալը կազմել է 117,3 մլրդ դրամ: Գործարքները կնքվել են հիմնականում մինչև 7 օր ժամկետայնությամբ: Միջբանկային ռեպոների միջին կշռված եկամտաբերությունը ամսվա ընթացքում եղել է 6,16%: Կնքված գործարքների առավելագույն և նվազագույն եկամտաբերությունները եղել են մոտ համապատասխանաբար՝ 6.25% և 6,10 %:

8. Բորսայական ռեպո շուկայում գործարքները կնքվել են միայն կորպորատիվ պարտատոմսերով: Գործարքի առարկա են հանդիսացել միայն դոլարալին պարտատոմսեր: Բորսայական ռեպոյի ընդհանուր ծավալը կազմել է 2.248 մլն դոլար, կնքված գործարքների եկամտաբերությունը 2.75% է: Գործարքները կնքվել են 14-168 օր ժամկետայնությամբ:

9. Արտաբորսայում ընդհանուր առմամբ կնքվել են 9.7 մլն դոլարի կամ 4.709 մլրդ դրամի 27 սվոփ գործարք: Ընդ որում միջբանկան շուկայում գործարքներ չեն կնքվել: Միջբանկային շուկայից դուրս կնքված գործարքների եկամտաբերությունը միջինում եղել է 4,25%: Առավելագույն և նվազագույն եկամտաբերությունները համապատասխանաբար 5.5% և 3%: Նոյեմբեր ամսին եվրոյով կնքվել է 1սվոփ գործարք 913,776 դոլար կամ 500 մլն ծավալով և 6,3 տոկոս եկամտաբերությամբ:

10. Միջբանկային վարկային շուկայում հոկտեմբեր ամսին կնքվել են 53 վարկայն գործարքներ 3 արժույթներով՝ դրամ, դոլար և եվրո: Դրամային վարկերի ծավալը կազմել է մոտ 42,3 մլրդ դրամ, գործարքների միջին եկամտաբերությունը կազմել է 6,16%: ԱՄՆ դոլարով ընդհանուր առմամբ կնքվել են 45,6 մլն դոլարի միջբանկային վարկային 19 գործարք, որոնց միջին տոկոսադրույքը կազմել է 2,6 %: Կնքվել է եվրոյով 4 վարկային գործարք, որոնց ընդհանուր ծավալը կազմել է 82 մլն եվրո: Գործարքների միջին տոկոսադրույքը կազմել է 0,98%:

# 1.Պետական պարտատոմսերի շուկա

***Պետական պարտատոմսերի առաջնային շուկա***

Պետական պարտատոմսերի շուկայում նոյեմբեր ամսին Ֆինանսների նախարարության կողմից իրականացվել է 11,517 մլրդ դրամի 8 տեղաբաշխում:

**Աղյուսակ 1.**

**2018 թ. Նոյեմեր ամսին պետական պարտատոմսերի տեղաբաշխումները և եկամտաբերությունը**

| | Թողարկման համար | Մարման ամսաթիվ | Աճուրդի ամսաթիվ | Բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ) | Սահմանային եկամտաբերություն | Միջին կշռված եկամտաբերությունը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | AMGT5204B198 | 04.11.2019 | 06.11.2018 | 1,000,000,000 | 6.2497 | 6.2258 |
| 2 | AMGT5204B198 | 04.11.2019 | 07.11.2018 | 140,000,000 | 6.2258 | 6.2258 |
| 3 | AMGT52058196 | 05.08.2019 | 12.11.2018 | 1,000,000,000 | 6.1517 | 6.1222 |
| 4 | AMGT52058196 | 05.08.2019 | 13.11.2018 | 161,200,000 | 6.1222 | 6.1222 |
| 5 | AMGN60294235 | 29.04.2023 | 20.11.2018 | 7,000,000,000 | 8.4733 | 8.3108 |
| 6 | AMGN60294235 | 29.04.2023 | 21.11.2018 | 1,056,000,000 | 8.3108 | 8.3108 |
| 7 | AMGT52043198 | 04.03.2019 | 26.11.2018 | 1,000,000,000 | 6.0850 | 6.0563 |
| 8 | AMGT52043198 | 04.03.2019 | 27.11.2018 | 160,000,000 | 6.0563 | 6.0563 |

Ընդհանուր առմամբ պարտատոմսերի պահանջարկը մոտ 1,36 անգամ գերազանցել է պահանջարկին: Իրականացված կարճաժամկետ պարտատոմսերի բոլոր աճուրդների դեպքում նախորդ ժամանակահատվածներում իրականացված տեղաբաշխումների նկատմամբ հիմնականում տոկոսադրույքի նվազում են ունեցել: 52 շաբաթական պարտատոմսի երեք տեղաբաշխում է տեղի ունեցել: Պահանջարկը առաջին աճուրդի ժամանակ գերազանցել է առաջարկը 2,8 անգամ, իսկ երկրորդ և երրորդ տեղաբաշխումների ժամանակ համապատասխանաբար՝ 1,21 և 1,2 անգամ: Առաջին աճուրդի սահմանային և միջին եկամտաբերությունները կազմել են համապատասխանաբար 6,2497% և 6,2258%: Միջին եկամտաբերությունը նախորդ ամսվա նույն ժամկետայնության աճուրդից նվազել է 0,03 տոկոսային կետով: Կարճաժամկետ պարտատոմսերի երկրորդ աճուրդի սահմանային և միջին եկամտաբերությունները կազմել են համապատասխանաբար՝ 6,1517% և 6,1222%: Կարճաժամկետ պարտատոմսերի երրորդ տեղաբաշխման աճուրդի միջին և սահմանային


© ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագիր

եկամտաբերությունները կազմել են համապատասխանաբար՝ 6,0850% և 6,0563%: 2027թ. մարվող միջնաժամկետ 60 ամսական պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի պահանջարկը առաջարկին գերազանցել է 1,13 անգամ, իսկ աճուրդի սահմանային և միջին եկամտաբերությունները եղել են համապատասխանաբար 8,4733% և 8,3108%: Նույն պարտատոմսի նախորդ աճուրդի համեմատ եկամտաբերությունը աճել է 0,07 տոկոսային կետով:

Պետական պարտատոմսերի աճուրդներին պահանջարկի մեծ ծավալը պայմանավորված է եղել հիմնականում շուկայում առկա իրացվելիության ավելցուկով: Բացի այդ երկարաժամկետ պարտատոմսերի աճուրդների մեծ մասը գնվում է շուկայի մի քանի խոշոր ներդրողների կողմից, ինչն էլ թույլ չի տալիս շուկայում եղած ընդհանուր պահանջարկի բավարարում: Սակայն երկրորդային շուկայում պարտատոմսերի եկամտաբերությունները երկարաժամկետ գործիքների դեպքում հասել են իրենց պատմական նվազագույն մակարդակին, և շուկայի մասնակիցների մոտ տոկոսադրույքների հետագա նվազման սպասումները գնալով պակասում են, ինչի արդյունքում կարծում ենք շուկայում տոկոսադրույքների առկա մակարդակը կպահպանվի: Որպես եկամտաբերության աճի գործոն կարող է ազդել միայն ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության խստացումը, ՀՀ միջազգային վարկանիշի նվազեցումը, տարածաշրջանում տնտեսական, քաղաքական և ռազմական լարվածությունը:

Նոյեմբեր ամիսն Ֆինանսների նախարարությունը պետական պարտատոմսերի հետգնումներ չի իրականացրել:

Ընդհանուր առմամբ շրջանառության մեջ եղած պետական պարտատոմսերի ծավալները նախորդ ամսվա վերջի դրությամբ նոյեմբեր ամսին ավելացել են՝ միջնաժամկետի և երկարաժամկետի ծավալները կազմել են 548,599 մլրդ դրամ (աճել է 8,056 մլրդով), իսկ կարճաժամկետինը նվազել է՝ կազմելով 26,721 մլրդ (աճել է 0,530 մլրդ-ով): Շրջանառության մեջ եղած կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը հոկտեմբեր ամսվա վերջին կազմել է 6,1771 % (հոկտեմբերի վերջին՝ 6,1595%): Միջնաժամկետ և երկարաժամկետ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը շրջանառության մեջ կազմել է 12.6583 %՝ նախորդ ամսվա վերջի 12.7231%-ի փոխարեն:


© ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագիր

**Պետական պարտատոմսերի երկրորդային շուկա**

***Արտաբորսայական***

Նոյեմբեր ամսին պետական պարտատոմսերի երկրորդային շուկայի արտաբորսայական հատվածում իրականացվել է 7,054 մլրդ դրամի 49 գործարք: Միջբանկային գործարքների ծավալները կազմել են կնքված գործարքների 1,4 տոկոսը՝ 0,99 մլրդ դրամ, ինչը 1 գործարքի արդյունք է: Ֆինանսական շուկայի այլ մասնակիցների միջև կնքված գործարքների ծավալը կազմել է 6,955 մլրդ դրամ: Կնքված գործարքների 22,7 տոկոսը կնքվել է 47 թվականին մարվող պետական 30 տարեկան պարտատոմսերով, 18,2 տոկոսը՝ 36 թվականին մարվող 20 տարեկան երկարաժամկետ, 17,8 տոկոսը՝ 20 տարեկան 32 թվականին մարվող պետական պարտատոմսերով, իսկ 25,8 տոկոսը՝ 2023 թվականին մարվող միջնաժամկետ պետական պարտատոմսերով: Գործարքների կենտրոնացվածության նման պատկերի պատճառը այդ պարտատոմսերով տեղաբաշխման աճուրդներն էին, ինչպես նաև շուկայի մասնակիցների մոտ այդ ժամկետայնության պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի աճը, դրանց եկամտաբերության շարունակական  նվազեցումը վերջին ամիսների ընթացքում: Մինչև մեկ տարի մարման ժամկետայնությամբ պարտատոմսերով գործարքների ծավալը կազմել է ընդհանուր գործարքների 11,7 տոկոսը:

Եվրոբոնդերով արտաբորսայական շուկայում կնքվել է ընդամենը 8 գործարք՝ 19.249 մլն դոլար ծավալով: Գործարքները կնքվել են ինչպես 2020 թ, այնպես էլ 2025թ մարվող եվրոբոնդերով: Միջբանկային շուկայում կնքված գործարքների ծավալը կազմել է 1,062 մլն դոլար, ինչը կնքված բոոր գործարքների 56 տոկոսն է: Գործարքների միջին կշռված եկամտաբերությունը 2020թվականին մարվող պարտատոմսերի համար կազմել է 5,1873, իսկ 2025թվականին մարվող պարտատոմսերի դեպքում՝ 6,0781 տոկոսս:

Աղյուսակ 2.

**2018 թ. Հոկտեմբեր ամսին պետական պարտատոմսերի արտաբորսայական շուկայում կնքված գործարքները**

| Թողարկման համար | Գործարքների ծավալ | Միջին կշռված եկամտաբերություն |
|---|---|---|
| AMGB30163472 | 1,600,805,306 | 10.6896% |
| AMGB2029A366 | 1,339,815,525 | 10.3512% |
| AMGB20172327 | 1,256,654,209 | 9.9556% |
| AMGB1029A250 | 100,945,168 | 8.9500% |
| AMGN60294235 | 1,817,439,856 | 8.3243% |
| AMGN60294219 | 105,590,527 | 7.7730% |
| AMGB10172212 | 3,378,661 | 7.2940% |
| AMGN36294202 | 7,102,158 | 7.1100% |
| AMGT5204B198 | 283,057,300 | 6.2278% |
| AMGT52029197 | 287,212,835 | 5.5500% |
| AMGT52036192 | 252,367,493 | 5.5000% |
| Ընդամենը | 7,054,369,038 | |


© ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագիր

***Պետական պարտատոմսերի բորսայական շուկա***

Պետական պարտատոմսերի բորսայական շուկան բավականին ակտիվ է եղել:

***Աղյուսակ 3***

***Նոյեմբեր ամսվա ՆԱՍԴԱՔ Օ ԷՄ ԷՔՍ Արմենիայում պետական պարտատոմսերով կնքված գործարքները***

| ԱՄՏԾ | ՎԵՐՋԻՆ | ՄԻՋ | +/- | ԱՌԱՎ | ՆՎԱԶ | ԳՈՐԾ | ՔԱՆԱԿ | ԾԱՎԱԼ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **AMGB1419C200** | 7.2205 | 7.2205 | - | 7.2205 | 7.2205 | 1 | 1,493,000 | 1,635,086 |
| **AMGB2029A366** | 10.4001 | 10.4001 | 0.0001 | 10.4001 | 10.4 | 2 | 200,000,000 | 242,749,500 |
| **AMGB30163472** | 10.7001 | 10.7 | 0.08 | 10.7001 | 10.6999 | 4 | 144,100,000 | 176,701,695 |
| **AMGN36294202** | 7.3269 | 7.124 | -0.0178 | 7.3269 | 7.06 | 10 | 129,000,000 | 130,991,426 |
| **AMGN60294219** | 7.7719 | 7.7668 | -0.1172 | 7.7883 | 7.6501 | 7 | 118,000,000 | 124,599,675 |
| **AMGN60294235** | 8.3499 | 8.3125 | 0.1633 | 8.3499 | 8.275 | 2 | 30,000,000 | 29,800,305 |
| | | | | | Ընդամենը. | 26 | 622,593,000 | 706,477,687 |

Նոյեմբեր ամսվա ընթացքում բորսայական շուկայում ընդհանուր առմամբ կնքվել է պետական պարտատոմսերով 0,706 մլրդ դրամի 26 գործարք: Գործարքները նեյեմբեր ամսվա ընթացքում նվազել են մոտ 2,6 անգամ: Գործարքների 34,4 տոկոսը կնքվել է 36 թվականին մարվող 20 տարեկան երկարաժամկետ պարտատոմսերով, 25,0 տոկոսը կնքվել են 47 թվականին մարվող 30 տարեկան երկարաժամկետ պարտատոմսերով: 18,5 տոկոսը կնքվել է 20 թվականին մարվող 60 ամսան միջնաժամկետ պարտատոմսերով: Նախորդ ամսվա համեմատ գրեթե բոլոր պարտատոմսերի եկամտաբերությունները նվազել են բացառությամբ 36 և 47 թվականին մարվող պարտատոմսերի:

Հասցեական գործարքների հարթակում 3 մլրդ դրամի գործարքներ են կնքվել:

*Աղյուսակ 4*

***Նոյեմբեր ամսվա ՆԱՍԴԱՔ Օ ԷՄ ԷՔՍ Արմենիայում պետական պարտատոմսերով հասցեական գործարքները***

| ԱՄՏԾ | ՕՐ | ՄԻՋ | ԱՐԺ | ԳՈՐԾ | ՔԱՆԱԿ | ԾԱՎԱԼ |
|---|---|---|---|---|---|---|
| **AMGB30163472** | 05.11.2018 | 10.62 | AMD | 1 | 2,440,000 | 3,000,751 |
| | | | Ընդամենը. | 1 | 2,440,000 | 3,000,751 |

Բորսայական հարթակում եվրոբոնդերով գործարքներ չեն կնքվել :

Նոյեմբեր ամսին պետական արժեթղթերի շուկայում գործել են 7 գործակալ բանկեր: Գործակալները պարբերաբար ուղենիշային պարտատոմսերով գնանշումներ են կատարում նաև ֆոնդային բորսայում: Սեպտեմբեր և հոկտեմբեր ամսիների վերջին օրերի դրությամբ ֆոնդային բորսայում գնանշումների ծավալները նույնպես ընդհանուր առմամբ վկայում են շուկայի ակտիվության մասին:

**Աղյուսակ 5.**

**Ֆոնդային բորսայում ուղենիշային պարտատոմսերի առաջարկի և պահանջարկի եկամտաբերությունները**

| ԾԱԾԿԱԳԻՐ | 31.10.2018 | | 30.11.2018 | | Փոփոխությունը | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՊՅՋ | ՊՀՋ | ՊՀՋ | ԱՌՋ | ՊՀՋ | ԱՌՋ |
| AMGB1029A276 | 9.35 | 9.1101 | 9.37 | 9.0976 | 0.0200 | -0.0125 |
| AMGB2029A366 | 10.5999 | 10.35 | 10.5999 | 10.3001 | 0.0000 | -0.0499 |
| AMGB30163472 | 10.7001 | 10.62 | 10.8001 | 10.7001 | 0.1000 | 0.0801 |
| AMGN36294202 | 7.1149 | 7.0701 | 7.3291 | 7.0599 | 0.2142 | -0.0102 |
| AMGN60294219 | 7.7885 | 7.7 | 7.7728 | 7.59 | -0.0157 | -0.1100 |
| AMGN60294227 | 8.0501 | - | 8.5 | 7.9001 | 0.4499 | - |

Բորսայում գնանշվող բոլոր ուղենիշային պարտատոմսերի ինչպես առաջարկի, այնպես էլ պահանջարկի եկամտաբերությունները տարբ միտումներ են ունեցել աճի կամ նվազման առումով: 36 և 47 թվականիին մարվող երկարաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունները

աճել են, իսկ մնացածինը նվազել: Նման պատկերը պայմանավորված է շուկայական ակտիվությամբ: Սեպտեմբեր ամսվա վերջից ֆինանսաների նախարարությունը հարապարակել է ուղենիշային պարտատոմսերի ցանկը հաջորդ եռամսյակի համար: Ուղենիշային պարտատոմսերի ցանկը չորրորդ եռամսյակի համար 2022 թվականին մարվող 60 ամսական պարտատոմսերի փոխարեն ուղենիշա ուղենիշային պարտատոմսերի ցանկում ընդգրկվել է 2023 թվականին մարվող 60 ամսական պարտատոմսերը:

**Աղյուսակ 6.**

**Ուղենիշային պետական պարտատոմսերի ցանկը**

| Ուղենիշային պարտատոմսեր 01.07.18-30.09.18 ժամանակաշրջանի համար | Ուղենիշային պարտատոմսեր 01.10.18-31.12.18 ժամանակաշրջանի համար |
|---|---|
| AMGN36294202 | AMGN36294202 |
| AMGN60294219 | AMGN60294219 |
| AMGN60294227 | AMGN60294235 |
| AMGB1029A276 | AMGB1029A276 |
| AMGB2029A366 | AMGB2029A366 |
| AMGB30163472 | AMGB30163472 |

Առաջնային և երկրորդային շուկաներում պետական պարտատոմսերի եկամտաբերությունների փոփոխություններն իրենց ազդեցությունն են ունեցել նաև եկամտաբերության կորերի վրա: Այդ ամենը դրսևորվել է հիմնականում եկամտաբերության կորերի նվազմամբ:

**Գծապատկեր 1.Արժեկտրոնային պարտատոմսերի եկամտաբերության կորեր 31.10.18թ դրությամբ**




**Գծապատկեր 2.Արժեկտրոնային պարտատոմսերի եկամտաբերության կորեր 30.11.18թ դրությամբ**




Բոլոր ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսերի եկամտաբերությունները ունեցել են նվազման միտում, բացառությամբ երկարաժամկետ պարտատոմսերի: Պատճառը այդ պարտատոմսերի նկատմամբ առաջարկի և պահանջարկի փոփխություններն են և դրանց հետագա աճուրդների նկատմամբ սպասումները:


© ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագիր

**Գծապատկեր 3. Զեղչատոկոսային պարտատոմսերի եկամտաբերության կոր 31.10.18թ դրությամբ**




**Գծապատկեր 4. Զեղչատոկոսային պարտատոմսերի եկամտաբերության կոր 30.11.18թ դրությամբ**




Զեղչատոկոսային պարտատոմսերի դեպքում նույնպես եկամտաբերության կորը նվազել է: Նվազման ազդեցությունը առավել շատ դրսևորվել է առավել երկարաժամկետ պարտատոմսերի դեպքում:

 © ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագիր

**Գծապատկեր 5. Պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունների դինամիկան հոկտեմբեր ամսվա ընթացքում**




Պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության տոկոսադրույքների տատանումների վերլուծությունը ցույց է տալիս դրանց ընդհանուր առմամբ նվազեցման միտումը:


© ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագիր

Աղյուսակ 7.

**Մինչև մարում եկամտաբերությունների վարիացիաները**

| | *6 ամիս* | *1 տարի* | *3 տարի* | *5 տարի* | *10 տարի* | *20 տարի* | *30 տարի* |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 ամիս | 0.0004 | 0.0004 | 0.0008 | 0.0009 | 0.0007 | 0.0005 | 0.0005 |
| 3 ամիս | 0.0008 | 0.0018 | 0.0193 | 0.0102 | 0.0064 | 0.0029 | 0.0084 |
| 1 տարի | 0.0174 | 0.0241 | 0.0376 | 0.0279 | 0.0277 | 0.2237 | 0.2862 |
| 2 տարի | 0.1411 | 0.2692 | 0.7098 | 0.8873 | 0.8012 | 0.7445 | |
| 3 տարի | 3.3647 | 4.3721 | 6.3775 | 6.2197 | 4.6820 | 3.2646 | |

Վարիացիայի գործակիցների վերլուծությունը պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունների դինամիկայի դիտարկման ժամանակ ցույց է տալիս, որ եկամտաբերության տատանումները առավել մեծ չափով եղել են առավել կարճաժամկետ պարտատոմսերի դեպքում: Ընդ որում վարիացիայի գործակիցների ամենամեծ արժեքը եղել է 2 տարվա կտրվածքով, ինչը պայմանավորված է 2013 թվականից մինչև 2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ֆինանսական շուկայում եկամտաբերությունների նվազմամբ և 2014թվականի վերջից ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության խստացման պայմաններում եկամտաբերությունների աճով: Ընդ որում ԿԲ գործիքների ազդեցությունը ավելի մեծ է եղել ավելի կարճ ժամկետայնությամբ պարտատոմսերի եկամտաբերության վրա, ինչը պայմանավորված է կարճաժամկետ միջոցների նկատմամբ շուկայի մասնակիցների կողմից պահանջարկի աճով և երկարաժամկետ հորիզոնում առավել դրական սպասումներով:

## 2. Կորպորատիվ արժեթղթերի շուկաներ

2018թ նոյեմբերի 1-ին Ամերիաբանկ ՓԲԸ-ի անվանական, արժեկտրոնային պարտատոմսերի (AMRBB2) առևտուրը Բորսայի պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում դադարեցվել է՝ դրանց շրջանառության ժամկետը լրանալու հիմքով:

2018թ նոյեմբերի 21-ին ցուցակվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի՝ դրամային և դոլարային ծածկագրերով պարտատոմսերը: Արժեթղթերն ընդգրկվել են բորսայի պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում ACBAB4 բորսայական հապավմամբ, 700 միլիոն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով պարտատոմսերը (AMACBAB24ER4) տեղաբաշխվել են 2018թ հուլիսի 12-ից նոյեմբերի 11-ն ընկած ժամանակահատվածում: Արժեթղթերը թողարկվել են 100 հազար դրամ անվանական արժեքով, 24 ամիս շրջանառության ժամկետով և արժեկտրոնի 9.5% տոկոսադրույքով, որը վճարվելու է կիսամյակային պարբերականությամբ: ACBAB3 բորսայական հապավմամբ 2 754 700 ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով պարտատոմսերը (AMACBAB23ER6) թողարկվել են 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով և արժեկտրոնի 5.25% տոկոսադրույքով, որը վճարվելու է կիսամյակային պարբերականությամբ:

2018թ նոյեմբերի 26-ին ցուցակվել են «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի դրամային պարտատոմսերը: Արժեթղթերն ընդգրկվել են բորսայի պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում: 500 միլիոն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով պարտատոմսերը թողարկվել են 10 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով, 24 ամիս շրջանառության ժամկետով և 10% արժեկտրոնային տոկոսադրույքով, որը վճարվելու է եռամսյակային պարբերականությամբ: Նոյեմբերի 28-ին ապպացուցակվել են «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի երկրորդային (Bbond) ցուցակում ցուցակված UNIBB2 հապավմամբ պարտատոմսերը: «ԱՐՄԵՆԲՐՈԿ» բաց բաժնետիրական ընկերությանը շնորհել է ՅՈՒՆԻԲԱՆԿ-ի կողմից թողարկված պարտատոմսերի (UNIBB7) շուկա ստեղծողի կարգավիճակ:

2018թ Նոյեմբերի 27-ին «Գլոբալ Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերը (GLBLB7) տեղաբաշխվել են ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ԲԲԸ-ում: Տեղաբաշխման ընթացքում կնքվել է 8 գործարք, որի ընթացքում տեղաբաշխվել է 500 068 340 ՀՀ դրամի պարտատոմս: Տեղաբաշխված պարտատոմսերի կտրման գինը կազմել է 10 000 ՀՀ դրամ, կտրման եկամտաբերությունը՝ 10%, միջին կշռված եկամտաբերությունը՝ 9.9947%: Նոյեմբերի 28-ի ապացուցակվել են Գլոբալ Կրեդիտի ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայի երկրորդային ցուցակում և ազատ շուկայում շրջանառվող անվանական պարտատոմսերը՝ GLBLB6 և GLBLB4:


© ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագիր

Հիմնական ցուցակում օգոստոս ամսին եղել են 8 թողարկողի 33 պարտատոմսեր և մեկ հասարակ անվանական բաժնետոմս:

**Աղյուսակ 8.**

**ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա բորսայի հիմնական ցուցակի արժեթղթերը**

| | Բորսայական հապավում | Ցուցակ | Դաս | Թողարկող |
|---|---|---|---|---|
| **1** | UNIB | A | հասարակ անվանական բաժնետոմս | «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ |
| **2** | UNIBB4 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ |
| **3** | UNIBB3 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ |
| **4** | AMRBB3 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | “Ամերիաբանկ” ՓԲԸ |
| **5** | AMRBB4 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | "Ամերիաբանկ" ՓԲԸ |
| **6** | AMRBB5 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | “Ամերիաբանկ” ՓԲԸ |
| **7** | AMRBB6 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | “Ամերիաբանկ” ՓԲԸ |
| **8** | AMRBB8 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | “Ամերիաբանկ” ՓԲԸ |
| **9** | ACBAB1 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| **10** | ACBAB2 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| **11** | BSTBB1 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | Սևծովյան Առևտրի և զարգացման Բանկ |
| **12** | NMCCB2B | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | "«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն" ՓԲԸ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 13 | NMCCB2G | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | “«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն” ՓԲԸ |
| 14 | NMCCB2H | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | “«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն” ՓԲԸ |
| 15 | NMCCB2I | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | “«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն” ՓԲԸ |
| 16 | ANLBB1 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | “ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ” ՓԲԸ |
| 17 | ANLBB2 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | “ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ” ՓԲԸ |
| 18 | ANLBB3 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | “ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ” ՓԲԸ |
| 19 | ANLBB4 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | “ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ” ՓԲԸ |
| 20 | ANLBB5 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | “ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ” ՓԲԸ |
| 21 | COVSB2 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | «Կոնվերս բանկ» ՓԲԸ |
| 22 | COVSB3 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | «Կոնվերս բանկ» ՓԲԸ |
| 23 | COVSB4 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | «Կոնվերս բանկ» ՓԲԸ |
| 24 | ARBKB2G | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | “Ամերիաբանկ” ՓԲԸ |
| 25 | ARBKB2F | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ |
| 26 | ARBKB2H | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ |
| 27 | ARBKB2I | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ |
| 28 | ARBKB2J | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ |
| 29 | COVSB5 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | «Կոնվերս բանկ» ՓԲԸ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 30 | COVSB6 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | «Կոնվերս բանկ» ՓԲԸ |
| 31 | COVSB7 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | «Կոնվերս բանկ» ՓԲԸ |
| 32 | INECB2 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| 33 | ACBAB4 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| 34 | ACBAB3 | Abond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ |

Երկրորդային ցուցակում ցուցակված արժեթղթերի քանակը 31-ն էր, որոնցից 3-ը բաժնետոմսեր էին, իսկ 28-ը՝ 7 թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր:

**Աղյուսակ 9.**
**ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա բորսայի երկրորդային ցուցակի արժեթղթերը**

| | Բորսայական հապավում | Ցուցակ | Դաս | Թողարկող |
|---|---|---|---|---|
| 1 | AHEK | B | Հասարականվանականբաժնետոմս | «ԱՐՑԱԽՀԷԿ» ԲԲԸ |
| 2 | ASEV | B | Հասարակ անվանական բաժնետոմս | «Արփա-Սևան» ԲԲԸ |
| 3 | HEZB | B | Հասարակ անվանական բաժնետոմս | «Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բանկ» ԲԲԸ |
| 4 | ARBKB2A | Bbond | Անվանականարժեկտրոնայինպարտատոմս | «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ |
| 5 | ARBKB2B | Bbond | Անվանական արժեկտրոնային պարտատոմս | «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ |
| 6 | ARBKB2D | Bbond | Անվանական արժեկտրոնային պարտատոմս | «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ |
| 7 | ARBKB2E | Bbond | Անվանական արժեկտրոնային պարտատոմս | «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ |
| 8 | AMRBB9 | Bbond | Անվանական արժեկտրոնային պարտատոմս | “Ամերիաբանկ” ՓԲԸ |
| 9 | AMRBB2A | Bbond | Անվանական արժեկտրոնային պարտատոմս | “Ամերիաբանկ” ՓԲԸ |
| 10 | SWISB7 | Bbond | Անվանական արժեկտրոնային պարտատոմս | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| 11 | SWISB2 | Bbond | Անվանական արժեկտրոնային պարտատոմս | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| 12 | SWISB3 | Bbond | Անվանական արժեկտրոնային պարտատոմս | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 13 | ARBKBD | Bbond | Անվանական արժեկտրոնային պարտատոմս | «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ |
| 14 | GLBLB3 | Bbond | Անվանական արժեկտրոնային պարտատոմս | ««ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ |
| 15 | GLBLB5 | Bbond | Անվանական արժեկտրոնային պարտատոմս | ««ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ |
| 17 | ARBBB1 | Bbond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| 18 | ARBBB3 | Bbond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| 19 | ARBBB5 | Bbond | անվանական արժեկտրոնային պարտատոմս | «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ |
